

Ե

- 4.4.3 Դու յորս հեծցիս յԱզատ ի վեր ի (Մապիս,
- 4.3.4.3 Ըզքեզ կայցիմ քաշք, տարցիմ յԱզատ ի վեր ի Մապիս.
- 3.3.3 Ամո կացցես և ըզլոյս մի տեսցես:

Ը

- 4.4 Հատուած գծացեալ Վարդգէս մաւ (Մուկն
- 3.3 Ի Տուհաց գաւառէն
- 5 Ըզքասաղ զետով,
- 4.4 Եկեալ Սրտեալ ըզՇրէշ բլրով
- 3.3 ԶԱրտիմէզ քաղաքու
- 5 Ըզքասաղ զետով,
- 4.4.3 Կրոն կոփել զկուռն Երուանդայ ար. (քայլի:

Մի և նոյն արուեստն է՝ ինչ որ տեսանք շարականաց, սաղմոսաց և այլ տաղաչափական գրուածոց մէջ. դժուարութիւնը ժամանակագրութեան կը վերաբերի: Համարելով որ Խորենացւոյն այս յիշածները բառացի կերպով նոյն լինին Հին գողթան թուելաց կամ վիպասանական երգոց հետ, ինչպէս կարելի է հայկական տաղաչափութեան արուեստը՝ Բրիտանոսէ Հինգ կամ վեց դար առաջ ստեղծուած և գործադրուած չհամարել, որով Հայ ազգին բնիկ կամ հնադարեան ազգերէ առնուած չհամարել: — Այս դժուարութեան լուծումը՝ եթէ կարենանք՝ ուրիշ յօդուածով մէջ կը բերեմ, իսկ եթէ ոչ՝ հմտագոյն բանագիտաց ճարտարութենէն կ'սկսեալեմ:

Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ

ԾԱՂԻԿ

Ծաղիկները ազգային, քաղաքական, ամենասակամ, գրական, գիտական. — Խմբագրապետ Դ. Բոլատ: Արտասահմանի համար տարեկան գինը 23 ֆր.:

Հասցէ՝ Rédaction du Journal "DZAGHIK", (Galata, Pérenchémbé - Bazar Hamdi-Pacha Han)

CONSTANTINOPLE

ԱՆԻ, ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Պատմական և հնագիտական հետազոտութիւն

ՊՐՈԾ. Ե. ՄԱՌԻ

(Շար. տես էջ 73)

Գ.

ԱՅՍՊԷՍ ուրեմն Անին սկսում է գեր խաղալ Բագրատունեաց թագաւորութեան մէջ: Այս իշխանական ցեղի (որ տուեց Հայաստանին մի հարստութիւն dynastie) Հին պատմութիւնը մեզ քիչ է վերաբերում: Տեղը չէ նաեւ ընդարձակ կերպով նկարագրել, թէ ինչպէս Բագրատունիք պատերազմների մէջ կարողացան ցոյց տալ իրանց գիտաւոր, համարձակ և ուժեղ, իսկ խաղաղութեան ժամանակ՝ իմաստուն, զործունեայ և ազգու, ինչպէս խոյս տալով շարունակ ընդհարումներ ունենալուց մահճատական էմիրների հետ՝ նոքա ձեռք բերեցին Հայ կամաւարական իշխանները Ախուրեանի յետեւում գտնուած նոցա ցեղական իշխանութիւնները: Ինչպէս զգալով իրանց անխոցելի այս նահանգի մէջ, նոքա կարողացան օգուտ քաղել Արաքսոց և Բիզանդացոց մէջ ունեցած իրանց չեղորութեամբ: Ինչպէս խալիֆաները և կայսրները աշխատում էին անընդհատաբար ճշխանել նրանց՝ իրանց շնորհներով: Ինչպէս երբեմն յաջող արշաւանքով, երբեմն վրաց թագաւորների և հայ իշխանների հետ ցեղական դաշինքների կապակցութեամբ՝ նոցա յաջողուում էր ստեղծել ամբողջ երկրի համար մի օգտակար modus vivendi, և այսպիսով ստեղծել մի քաղաքական ոյժ, որ պատկառելի էր նաեւ մեծ զօրութեանց առաջ: Բաւական է մեզ գիտեալ, որ ինքնորոգ դարում Բագրատունիք արդէն առնուածու էին թագաւորներ, և եթէ այդ թագաւորական իշխանութիւնը չկարողացաւ բոլոր

բովին ոչնչացնել այն ազդեցութիւնը, որ հա-
րեւան աշխարհակալ թագաւորութիւնները
ունէին նոցա վերայ, բայց և այնպէս Բա-
գրատունիք ճանաչում և զգում էին իրանց,
որպէս իրանց կառուածների կատարեալ թա-
գաւորներ: Նոքա փոխեցին արքունիքը (ré-
sidence). սկզբում Բագրատունիք նստում
էին Բագարաւում, որ տեղաւորուած է Ա-
խուրեանի ափին, Արաքսի մէջ թափուելուց
տասը վերստ հեռու. յետոյ նոքա փոխա-
դրուեցին Շիրակեան կամ Երասխաւոր
(այժմ Շորազեալ գիւղ) որ նոյնպէս տեղա-
ւորուած է Արաքսի նոյն ճիւղի ափի վերայ,
Անիից 25 վերստ հեռու դէպ ի հիւսիս:
Վերջինս այլ ժամանակ գեո եւս շարունա-
կում էր մնալ որպէս բերդ, որտեղ կարելի
էր յուսադիր ապաստան գտնել ճգնական
վայրկեաններում, և որտեղ վտանգի ժամա-
նակ պատսպարուում էին իշխանների ըն-
տանիքները և տեղաւորում էին թագաւորա-
կան գանձը: Աշոտ Գ. Ոլորմամբ 961
թուին (961—977) թագաւոր օծուեց Անույ
մէջ և այն ժամանակից այս քաղաքի քաղղը
փոխուեց: Աշոտ Գ. յաջորդեցին Անույ
մէջ Սմբատ Բ. Աշխարհակալը (977—989),
Գագիկ Ա. (990—1020), Սմբատ Գ. (1021
—1039), և մի ոչ երկար ընդհատուից (in-
terregne) յետոյ Գագիկ Բ. (1042—1044),
Թագաւորների ժամանակ, յիսուելով այն
զարգացման վերայ, որ ունեցաւ նիւթական
առեւտրական արտահանութեան մէջ, Անին
գարձաւ հայկական հոգեւոր և մտաւոր կեան-
քի կենդրոնը: Կաթողիկոսները մօտեցրին
իրանց Նիստը (résidence) Անիին, տեղա-
փոխուելով առաջ Արգինա, իսկ յետոյ ար-
դէն Անույ մէջ իսկ: Անույ իշխանները չու-
շացան դարձնել Անին՝ ի միջի ալլոց՝ նաեւ
ընդհանուր հայկական ուխտատեղի, տեղա-
փոխելով այդտեղ Հայոց Լուսաւորիչ Ս.

Գրիգորի արդիւնակեցնեցից մէկի (Ս. Հովհ-
սիմէի) նշխարները և Գրականական գոր-
ծունէութիւնը, բարձր կրթութեան տալա-
րէզը՝ լինելով հոգեւորականութեան ձեռ-
քում, տեղափոխուեցին Անի նաև շրջակայ
վանքերը: Անույ մէջ հիմնուեցին մի քանի
զրադարաններ, որոց մէջ և թագաւորականը:
Վերջին թագաւորը Գագիկ երկրորդ՝ իշ-
խեց Անույ մէջ հազիւ երեք տարի: Ներքին
երկպառակութիւնները և հարեւան թագա-
ւորների մրցումը, որոնք ճնշուում էին Ան-
ւոյ Բագրատունեաց բարձր իշխանութեամբ,
գերագոյն նուիրապետութեան (hierarchie)
երկերեսանի քաղաքականութիւնը, վերջապէս
բիւզանդական ինտրիգները գտնելով մի հրա-
շալի դէնք Վեստ Սարդիսի (մի ազդու պա-
տուախնդիր անձնաւորութեան) մէջ, որ ազ-
գային իշխանութեան մատնին էր, հասցրին
Բագրատունեաց թագաւորութիւնը այն աս-
տիճանի ուժամաքութեան, որ նա 1044
տարուայ վերջին՝ Բիւզանդացոց ձեռքը ան-
ցաւ: Անույ վերջին թագաւորը հրաւիրուեց
Բիւզանդիոն և խարդախութեամբ բռնուեց.
Իսկ Անի ուղարկուեցին բիւզանդական կա-
ռավարիչներ:

Անույ մէջ Բագրատունեաց շրջանին պատ-
կանող Հոյակապ շինութիւններից գեո եւս
պահպանուած են մի քանի բաներ, ի հարկէ
կիսակործան դիրքի մէջ:

Ամենահին շինութիւնները պէտք է որ
քաղաքի բարձր մասի մէջ գտնուէին. այս-
տեղ են միախմբուած, (ամենայն հաւանա-
կանութեամբ), պալատը, գանձարանը, թա-
գաւորական զրադարանը, եկեղեցին, գերեզ-
մանատունը՝ և ուրիշ շատերը. բայց այս
հարցի մասին վճռական կերպով ի հարկէ
կարելի է խօսել միայն երկար պեղումներից
յետոյ: Քաղաքի բարձր մասի մէջ պահպա-
նուած ամենահետաքրքիր աւերակները այն

1. Աշոտ Ա. թագաւորի գերեզմանը ընդհան-
րապէս ենթադրուում է մի ինչ որ եռանկանա-
ցած գերեզման, որ գտնուում է եկեղեցինե-
րից մէկին (գեոական ափին մի ցած տեղի վե-
րայ կառուցուած) Հոռոմոց վանքի կամ այժ-
մեան Ղօշափանքի մօտ: Բայց սա մի դատարկ

և ոչ մի հիմք չունեցող ենթադրութիւն է: Ար-
ձանագրութիւնը՝ որ վառ կերպով դրուած է
գերեզմանաքարի վերայ, չի ներկայացնում
ոչ մի հնական երեւոյթի և յիշեցնում է ամե-
նից առաջ Անի այցելող տուրքատեների նորա-
գոյն վիճադրական արհեստը:

աստիճանի կերպարանափոխում են, որ չէ կարելի եզրակացնել թէ եկեղեցին մնացորդներ են դոքա թէ պալատի: Այն լերան ժայռերի վերայ, որտեղ տեղաւորուած էր միջնաբերդը, տեղ տեղ բաւական մատչելի կերպով պահպանուած են մի քանի փոքրիկ եկեղեցիներ կամ մատուռներ, բայց առանց արձանագրութեան, և դատելով ճարտարապետութեան ձևից՝ աւելի մեղ մօտիկ շրջաններին պատկանող Հաստատութիւններ են:

Թագաւորական Հնարանական յանձնաժողովի Հնգատարութեամբ մեր կատարած պեղումները մինչեւ այժմ մեր առաջ բաց աբին հին Անույ պարիսպը, տեղաւորուած

այն հողի (territoire) ներքին — աւելի փոքրիկ — կէտի վերայ, որ յետոյ արդէն բռնուեց նրանով: Այս պարիսպը, սկսուելով մի անյայտ նշանակութիւն ունեցող շինուհովքեան մօտից, որ գտնուում է Ախուրեանի վերայ, կարել է Անույ ստարահարթը իւր բաց կողմից հարաւ-արեւելքից հիստա-տրումնաւոր գնացող ուղղութեամբ. (միւս կողմերից Անի արդէն պաշտպանուած էր խոր անդունդներով): Այս պարիսպը, որ տարբերուում է ինչպէս իւր դիրքով նոյնպէս և տաշտուած քարերի մեծութեամբ, հիմնուել է Աշոտ Ողորմած թագաւորի օրով, 964 թուին, և ներկայումս ծառայում է իբրեւ Անույ ա-



Անույ դատարանը:

մենահին մասերը որոշող սահմանների աւանաւաւ ապացոյց: Բարձր քաղաքից յետոյ, այս հին մասի մէջ, որ անուղղակի կերպով կից է նորա հետ, պէտք է փնտռել նաեւ հին անիական զեղարուեստի յիշատակները: Այս տեղ է ամբողջապէս արդէն վերոյիշեալ շինութիւնը, որի նշանակութիւնը զեւ եւս անյայտ է, բայց կարող է Դատարանը լինել: Արձանագրութիւնները (որ սակայն աւելի ուշ ժամանակուայ են վերաբերում, որոնք պահպանուած են շինութեան դրսում մի պատի վերայ) կամ հիմնում են Անեցոց համար նոր հարկերի ազատութիւն, կամ հաստատում են

այդպիսիները, և ցոյց են տալիս՝ որ աւերակները մի ինչ որ կառավարչական տեղի մնացորդներ են: Շինութիւնը գետնի հաւասարութեամբ ունի մի ներքին յարձր և մութ սենեակներով, որ (կարելի է) յատկացուած են դատապարտեալներին համար: Մի քանիսը ենթադրում են՝ որ այդ շինութիւնը մի մզկիթ է. բայց այն ժամանակ երբ հիմնուում էր Անույ հին մասը, այս քաղաքի մէջ մուսուլմաններ չկային, որոնց համար պիտի բարձրացուէին նմանօրինակ հոյակապ շինութիւններ. կարելի է մի բան, այսինքն, որ յետոյ Անույ մուսուլման կա-

աւարիչները այս Հին անիական շինութիւնը մղկիթ դարձրին : Ուրիշները այս աւերակները համարում են կաթողիկոսական պալատի մնացորդներ, մոռանալով որ այդ ժամանակ հայկական կաթողիկոսների նիստը գտնուում էր Արզիւնա, Անուց մի քանի վերստ հեռու : Բացի շրջաքարային կամարներից՝ այս շինութիւնը (որ լաւ դիրք ունի Անիից նայելով զէպի խորը անդունդի մէջ հոսող Ախուրեհանը) ներսում ցմրէթների մէջ ներկայացնում էր հրաշալի նկարներ, մասամբ ամբողջ մնացած :

Թրգմ. S. Մ.

Շարայարեղի



Մ Խ Ի Թ Ա Ր

(Շար. տես էջ 446)

ՄՎ ես դու որ շեշտ ի Սաղամինա Գրնաս հեծնելով զըրաստիդ վըրայ. Գըլխիկըդ կախած, զէմբըդ յալկահար, Զերմի բոցերով այրիս անդադար :

Միթէ կը յուսան զըտնելու հոն տեղ Բաժակիկ. մը պաղ ջուր շերմանըդ զեղ, Օտարին անգուլթ սիրան արդեօք էր ցաւ Ո՞ր վիշտ բիշ մ' յուզել ու շարժել կըրցաւ :

Հայոց ժամուն այդ խուցերէն ալ բեզ Պիտի քըշն դուրս, մինչ դու բոցակէզ Զերմովդ ըսպառիս, և հեռի քաղցէն Հայ ճըգնաւորաց վանքը տի նետեն :...

Եւ նետեցին հոն, թող իրենք ըսին կըրօնաւորներն հոգ, դարման տանին, Հոն ուր սիրոյ սով կար սարսափելի՝ Ինկաւ Մըլխիթարըն մեր եղկելի :

Տեղւոյն արեղայք արդէն գիտէին Անոր ուզդափառ հաւատքն ու հոգին,

Ձի նա անխաղախ խօսէր ու պարզէր Ճըշմարիտ հաւատքն ու յիսուսեան սէր :

Բայց անոնք զբոց գոյով անհըմուտ, Անոր խօսքերէն փոխանակ օգուտ Գաղելու՝ սաստիկ տառելութեամբ վառ՝ Թըշնամանէին ըզհէք Մըլխիթար :

Ուտի երբ քաղցէն հոն վանքը բերին, Զինքն ողորմելի խուց մը նետեցին, Ուր անպատըսպար արտաքին օգէն՝ Նեղուէր տառապէր իր շերմին տօթէն :

Գուրջի մը կըտոր, կամ հին մէկ ծածկոյթ Բերելու և ոչ մէկուն եղաւ փոյթ, Որով վերարկուէն կէսը վրան առած կէսն ալ ի ներքոյ՝ էր գետին պտակած :

Լըքեալ ամանէն, անոք, անտէրունչ Տննդին հետ կըռուէր լըռիկ, անտըրտունջ. Ոչ ոք կ'այցեկէր, ոչ ոք կը հարցնէր Թէ արդեօք բանի մը նա պէտք ունէր :

Ուտի կը ստիպուէր երթալ խոհանոց, Գիշ մը ջուր խընդել, զովացնել իր բոց, Նոյնպէս կերակրոյ համար ալ հարկ էր Լերան գազաթէն մինչեւ վար իջնէր :

Ձի խուցն այն կամ ճիշդն ըսելով ծակն այն Ուր նետուեցաւ, էր տանիքին վըրան, Ուր տեղ ելլելու, իջնելու համար Կողմակի ճամբայ մը կար զտօրկայր :

Արդ ամէն անգամ որ պէտք մ' ունենար Պէտք էր այն ճամբէն իջնել ոգեսպառ, Եւ յետոյ ելլել՝ սողալով գետնէն Ու երթալ փըռուել ծակին մէջ նորէն :

Վանքին պարտէզին մէջ կար մի անձաւ, Որմէ բըղնելով առատ ջուր ամբաւ Կ'երթար կը լեցնէր մի մեծ աւազան, Զորս կողմը օձերու կը վըրխտար խուժան :

Տննդին հըրատապ սաստիկ շերմութիւն Որ տեսէր երբորդ ժամէն մինչ իրկուն, Այնպէս կը տանջէր, որ քանի քանի Անգամ անըզգայ թըմբցուց զանի :